Դր. Էրան Գյունդուզ
Սոցիոլոգ, Ցեղասպանության հակառակորդների միություն,
Մայնի Ֆրակֆուրտ / Գերմանիա:

Ցեղասպանության ժխտումը և թուրքական հասարակության լռության պատճառները

Երբ ես վերնագրում խոսում եմ «թուրքական հասարակության» մասին, ապա, իհարկե, նկատի ունեմ Թուրքիայի ամբողջ հասարակությունը, որը ծայրաստիճան տարասեռ է: Չնայած ներկայիս Թուրքիայի բնակիչների մեծ մասը ծագումով, ինքնավերագրմամբ կամ ձուլմամբ իրենց «թուրքեր» են որակում, այնուամենայնիվ, բնակչության զգալի մասն, օրինակ, նաև քրդեր են և քրդական ծագմամբ մարդիկ:[1]

Այս համաժողովի շրջանակներում կրկին խոսելը հայերի, ինչպես նաև Անատոլիայի այլ ժողովուրդների ցեղասպանության ժխտման մասին մեզ հնարավորություն է տալիս կապ հաստատել պատմության և Լեռնային Ղարաբաղի/Արցախի շուրջ այսօրվա հակամարտության միջև: Թեզը հետևյալն է. Թուրքիայում ինչպես պետության, այնպես էլ հասարակության կողմից սեփական պատմության՝ տեղի չունեցած քննությունը և ցեղասպանության միջազգային պատժման տեղի չունենալը հնարավորություն են տալիս նախաձեռնել, խթանել և պաշտպանել հայերի վրա հետագա ռազմական հարձակումները, ինչը մենք ներկայումս կարող ենք փաստել Արցախում:

1. Ցեղասպանության ժխտումը

Զարմանալի է, որ մի պետություն կարողանում է ավելի քան 100 տարի, առայսօր ժխտել մի ակնհայտ ցեղասպանություն, որը տեղի է ունեցել համաշխարհային հանրության աչքի առաջ: Դրա համար կան մի շարք պատճառներ, որոնցից ես կցանկանայի լուսաբանել՝ իմ տեսանկյունից ամենակարևորները.

ա) Պետության հիմնադրման առասպելը և օրինականությունը

[1] Քրդերի՝ որպես ազգային խմբի դերը Օսմանյան պետության քրիստոնյա ախմբերի ցեղասպանության մեջ հակասական է: Քանի որ դրա քննությունը դուրս է իմ բուն թեմայի շրջանակներից, կկամենայի բավարարվել հետևյալ հակիրճ պարզաբանմամբ. Ծառքրդական ցեղեր, որպես թուրքերի «մուսուլման հավատակիցներ», թույլ են տվել իրենց դարձնել ցեղասպանության գործիք և ակտիվ մասնակցել են դրան, քանի որ նրանք և այն ժամանակ թույլ քրդական ազգային շարժումը դրանից օգուտներ քաղելու հույս են ունեցել և հավատացել են թուրքերի ու քրդերի «միասնական պետություն» հիմնադրելու՝ այն ժամանակվա քննարկումներին: Քաղաքականացված քրդերը և քրդական կուսակցություններն ու կազմակերպությունները, ըստ աշխարհայացքի, իրենց սեփական փորձառության հիման վրա այսօր հաճախակի բաց ու շիտակ են Օսմանյան պետության քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանության ճանաչման հարցում:

Օսմանյան պետության անկմամբ ի հայտ եկավ իրավահաջորդ պետության՝ ներկայիս Թուրքիայի հիմնադրման գաղափարախոսությունը: Այդ գաղափարախոսության հիմքում ընկած է թուրքական ազգայնականությունը: Երիտթուրքական Ittihat ve Terakki շարժումը, որը 1915 թ-ին իրականացրեց քրիստոնյա ժողովուրդների ցեղասպանությունները, այդ գաղափարախոսության կենտրոնական դերակատարն է, որը հետագայում հանգեցրեց Թուրքիայի Հանրապետության ստեղծմանը: Նոր հանրապետության հիմնադրման առասպելը հիմնված է Առաջին աշխարհամարտի բռնազավթիչների դեմ «ազատագրական պատերազմի» պատմության վրա: Պետության կողմից առայսօր սատարվող այդ մտայնությունը պահպանելու համար ցեղասպանության ողջ պատմությունը բացառվում է, նույնիսկ աղավաղվում: Կարճ ասած՝ թուրք-օսմանյան պատմության մեջ ցեղասպանությունների ճանաչումը կհանգեցնի այդ՝ հիմնադրման առասպելի կազմալուծման և թուրքական պետության օրինականության ճգնաժամի: Այնուհետև պատմություն պետք է նորովի քննվի և գրվի: Հասարակության և պետության համար հետևանքները կլինեն անհաշվելի:

բ) Պետությունների և միջազգային հանրության դիրքորոշումը

Ի տարբերություն հիտլերյան վարչակարգի՝ երիտթուրքական վարչակարգը և քեմալականները 1-ին Համաշխարհային պատերազմից որպես պարտվողներ դուրս չեկան: Ցեղասպանության պատժում տեղի չի ունեցել, այնպես որ «Նյուրնբերգյան դատավարությունների» հետ համեմատելի դատավարություններ և հանցագործությունների՝ ապանացիստականացման ծրագրի հետ համեմատելի քաղաքական և հասարակական վերաքննություն տեղի չեն ունեցել: Չնայած պետությունների և միջազգային կազմակերպությունների, զորօրինակ ՄԱԿ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ դրանով Թուրքիայի դեմ կոնկրետ պահանջներ և պատժամիջոցներ ի հայտ չեն եկել: Ես դրան ավելի ուշ մի փոքր ավելի մանրամասն կանդրադառնամ:

գ) Բնակչության կողմից ժխտողականությանը ցուցաբերվող աջակցությունը

Ազգայնական գաղափարախոսությունը, որը թուրքական պետության և թուրք ազգի շահերը վեր է դասում ամեն ինչից և «մյուս» բնակիչներին որակում է՝ որպես իրավազուրկ և խոտորվող խմբեր, պաշտպանվում է հասարակության մեծամասնության կողմից: Տեղի է ունենում ոչ միայն փաստացի իրավազրկում, այլ ավելի շուտ նաև ոչնչացման քաղաքականություն, ինչը մենք ակներևաբար կարող ենք հաստատել քուրդ բնակչության օրինակով: Պետության կողմից պարբերաբար իրականացվող ժխտողականության և քողարկման քաղաքականությունը հանգեցնում է նրան, որ լայն շերտերը, որոնք իրենց կրթամակարդակի պատճառով առանց այդ էլ ունեն կրթության և տեղեկատվության վատ հասանելիություն ունեն, էլ ավելի քիչ են առնչվում փաստերի հետ և կարող են պատմությունը քննադատաբար կասկածի տակ դնել: Այդպիսով հասարակության լայն շերտերն իրենք են դառնում պետության կողմից հովանավորվող ազգայնականության և իսլամիզմի դերակատարներ, ինչպես նաև կազմակերպված ժխտողականության հանցակիցներ: Բնակչության մի զգալի մասը, առնվազն լռելյայն,

հավանությամբ է վերաբերում ընդդիմադիրների պետական ճնշման ողջ գործելակերպին և պետական կամայական արդարադատությանը: Իրադարձությունների զարգացմանը քննադատաբար և մտահոգությամբ հետևող մարդիկ ևս նախընտրում են լռել, քանի որ արագ կդառնան պետական կամայականության թիրախ:

2. Ինչու՞ է Թուրքիայում հասարակության մեծամասնությունը լռում:

Չնայած ԵՄ-ին անդամակցելու գործընթացի ժամանակ, հատկապես 2000-2005 թվականներին, տեղի ունեցավ քաղաքական բանավեճերի, նաև ցեղասպանության վերաբերյալ քննարկումների և պատմության վերագնահատման ազատականացում, այդ գործընթացն այժմ ամբողջովին դադարել է քաղաքական ընդդիմախոսների, ինչպես նաև ռեժիմի վերաբերյալ ցանկացած քննադատական կարծիքի աներևակայելի ճնշման ուժգնացման պատճառով: Այլևս անհնար է ժամանակակից Թուրքիայում պատկերացնել մարդու իրավունքների, խոսքի ազատության կամ ժողովրդավարության մասին որևէ հասարակական քննարկում: Դա առավել ևս վերաբերում է սեփական պատմության և ցեղասպանությունների հանդեպ հասարակության քննական մոտեցմանը: Չնայած դա թուրքական քաղաքականության և հասարակության համար առանցքային հարց է, պատմությամբ և ցեղասպանություններով զբաղվելն այսօր նվազ արդիական, անկարևոր «շքեղ խնդիր» է: Հասարակությունը չէ՞ որ ունի այլ, ավելի հրատապ խնդիրներ, այսպիսին է ընկալումը: Քննադատող և առաջադեմ մարդիկ հայտնվում են ճաղերի հետևում: Նրանք, ովքեր դեռ բանտ չեն նստել, ահաբեկվում են, և նրանց սպառնում են կամայական դատավարություններ ու բանտարկություններ, որոնք զուրկ են որևէ հիմքից և հանդիպում են միայն տոտալիտար պետություններում: Սեփական պատմությանն առերեսվելու և այն քննելու անհրաժեշտության մտավոր և բարոյական ըմբռնումն ամբողջությամբ բացակայում է վարչակարգի մոտ: Այնուհանդերձ, բնակչության լայն հատվածների մոտ նմանապես բացակայում է հասարակության չլուծված խնդիրները, շարունակ ավելի ագրեսիվ դարձող ազգայնականությունը և կրոնական մոլեռանդությունը, որպես չքննված հանցագործությունների պատմության արտահայտություն, ըմբռնելու մտավոր և բարոյական ունակությունը:

3. ԵՄ-ի, այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների դերը

2016 թ-ին ԵՄ-ի և Թուրքիայի միջև ստորագրված՝ փախստականների կացության համաձայնագրով Եվրամիությունը, գլխավորապես նաև գերմանական կառավարությունն արդեն իսկ լիովին կախման մեջ են ընկել թուրքական ռեժիմից: Եվրամիությունն ինքը, ի միջի այլոց, Բրեքսիթի և ավտորիտար ու ոչ իրավապետական գործելակերպ իրականացնող արևելաեվրոպական անդամ երկրների ստեղծած մարտահրավերների պատճառով գտնվում է խոր ճգնաժամի մեջ, որում նա դեռ երկար ժամանակ ի վիճակի չի լինի մի ձայնով խոսել և Թուրքիայի դեմ լուրջ պատժամիջոցներ իրականացնել:

Միջազգային կազմակերպությունները, զորօրինակ ՄԱԿ-ը գրեթե անզոր են երևում, քանի որ ամենաուշը 2003 թ. իրաքյան պատերազմից հետո միջազգային իրավունքը ոտնակոխ է արված։ Այդ ժամանակից ի վեր միջազգային քաղաքականությունը բնորոշվել է միակողմանի շահերի հետապնդմամբ ու միջազգային իրավունքի ոտնահարմամբ։ Թուրքիայի ներխուժումը հյուսիսային Սիրիա (Ռոյավա) անտարբերության է մատնվել ու տակավին մատնվում է։ Եթե երբևէ արևմտյան ժողովրդավարությունների շահերի քաղաքականությունը ինչ-որ կերպ հիմնվում էր մարդու իրավունքների պահպանման և խաղաղության գործընթացների աջակցման վրա, ապա այսօր այն դրան լիովին հրաժեշտ է տվել։ ՍԴՈՒ-ն (Սիրիայի դեմոկրատական ուժեր)՝ սիրիական քրդերի ղեկավարման ներքո, բախտի քմահաճույքին թողնելը, որի հետևանքը եղավ թուրքական ռեժիմի և նրա ջիհադիստական հանցակիցների ամրապնդումը, շատ բան է ասում մեր արևմտյան արժեքները պաշտպանելու՝ մեր ցանկության մասին։ Ֆրանսիացի հեղինակ Պատրիկ Ֆրանչեսկին, որը հյուսիսային Սիրիայում (Ռոյավա) Թուրքիայի ներխուժման հետևանքով տեղի ունեցած կապիտուլացիան և քրդերին ու ՍԴՈՒ-ում ներկայացված մյուս ազգային խմբերին բախտի քմահաճույքին թողնելը համարում է արևմուտքի քաղաքակրթական թշվառության արտահայտություն, միանգամայն իրավացիորեն այսպիսի հիմնավորում է ներկայացնում. «Մենք՝ արևմտյան հասարակություններս (այսպես կարող ենք հանրագումարի բերել նրա թեզերը) այլևս չենք կարող կամ չենք ուզում երաշխավոր լինել ու պայքարել այնպիսի արժեքների համար, ինչպիսիք են խոսքի ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, աշխարհիկությունը, որոնք դարեր շարունակ պատկանել են արևմտյան ժողովրդավարությունների արժեհամակարգին»։[2] Չնայած այդ արժեքները հարձակման են ենթարկվում (Հենց Ռոյավան և Արցախը դրա վառ օրինակներն են), մենք նրանց, ովքեր այլուր մեր արժեքները պաշտպանում են և դրանց համար զոհաբերում են իրենց կյանքը, թողնում ենք բախտի քմահաճույքին։ Արցախի հայերը ևս այսժամ լիովին միայնակ են թողնվում։ Լռությամբ և անգործությամբ դաշնակցելով հարձակվողների հետ՝ թույլ են տալիս, որ տեղի ունենա ավերումն ու հայ մարդկանց փախուստը։

4. Ելքեր և հեռանկարներ

Ինչ վերաբերում է ցեղասպանության և Թուրքիայի սեփական պատմության քաղաքական ու հասարակական քննության հավանակությանը, ես ցավոք հոռետեսորեն եմ տրամադրված։ Դրան պետք է նախորդի պետության և հասարակության ժողովրդավարացումը, ինչը ներկայումս անհնար է կանխատեսել։ Ընդհակառակը, ընդդիմադիրների և տարբերվող կարծիքների ճնշումն այնքան ուժգին է, որքան երբեք չի եղել։ Թուրքական բանտերում գտնվող մտավորականների, քաղաքական գործիչների և լրագրողների թիվն ահռելի մեծ է։ Պետականամետ լրատվամիջոցների մեծամասնության մեջ, կապված Լեռնային Ղարաբաղում (Արցախում) ընթացող պատերազմի հետ, կարելի է տեսնել նաև դարձյալ ծլարձակող հայատյացությունը և Թուրքիայի կողմից սադրումն

[2] Franceschi, Patrice (Juli 2020): Avec les Kurdes. Ce que les avoir abondonnés dit de nous. Éditions Gallimard, Paris.

ու Ադրբեջանին ցուցաբերվող հսկայական աջակցությունը՝ որպես սեփական պատմության քննադատական վերլուծության բացակայության հետևանք։

Կարծում եմ, որ Թուրքիայում հանրության առանձին հատվածներ անպատճառ տեղյակ են ցեղասպանության պատմության մասին կարող էին պատրաստ լինել այն քննական կերպով վերլուծելու։ Դրա համար, սակայն, անհրաժեշտ է համապատասխան քաղաքական նախադրյալ և կամք, որը պետք է բարձրագույն ատյանից, այսինքն՝ կառավարության կողմից տրամադրվի։ Այն, թե դա մի օր Թուրքիայում տեղի կունենա, նման է հրաշքի։ Պատմության վերանայումը տեղի կունենա հետևյալ պայմանների դեպքում, որոնք, ըստ հնարավորին, զուգահեռաբար պետք է առկա լինեն.

1. Հասարակությունը պետք է պայքարի է իր ժողովրդավարական իրավունքների համար, ինչպիսիք են խոսքի և խղճի ազատությունը, և ի վիճակի լինի քննադատական և ժողովրդավարական քննարկում ծավալել սեփական պատմության, ներկայի և ապագայի վերաբերյալ։

2. Թուրքական պետությունը/կառավարությունը կա՛մ հասարակական, կա՛մ միջազգային ճնշման հիման վրա պետք է ստիպված լինի վարել պաշտոնական և հասարակական ճանաչման քաղաքականություն՝ համապատասխան փոխհատուցումներով։

Միայն այն ժամանակ, երբ արևմտյան պետություններն իրենց քաղաքականությունը հրատապ ռեժիմով քննադատական և ժողովրդավարական հիմունքներով կկառուցեն, իսկ Թուրքիայում ընդդիմությունը համախմբվի և ուժեղանա, Թուրքիայում կարող է քաղաքականության մի դանդաղ շրջադարձ տեղի ունենալ։ Մի քաղաքականությունից, որը միայն իր կարճաժամկետ շահերն է տեսնում և հիմնված չէ արժեքների վրա, բոլոր մասնակիցները տևականորեն վնասներ կկրեն։ Այդ պատճառով ընդհանրապես գլոբալ հակամարտությունների ժամանակ ժողովրդավարության և մարդու իրավուքների իրագործումը, իսկ արդի պատերազմի պայմաններում Արցախի հայ ժողովրդի գոյության իրավունքը պետք է լինի պատասխանատուների քաղաքական առևտրի կիզակետում։